

## ՄՅՈՒԶԱՆՆԱ ՆԱԶԻՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի  
և իրավունքի ինստիտուտի հայցորդ

### ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սույն հոդվածում հեղինակը սահմանադրությունը դիտարկում է արժեքանության տեսանկյունից, քաջահայտում է նրա սոցիալական արժեքը հասարակական և պետական համակարգում:

*Հիմնարար- սահմանադրություն, սահմանադրության հիմնարար արժեքներ, սոցիալական, քաղաքացիական համերաշխություն և համաձայնություն:*

Արժեքի տակ սովորաբար ընկալում են որոշակի բարիք, որին տրվում է նախապատվություն այլ բարիքների շարքում: Ըստ Կ. Մանխեյմի նշման՝ «առանց արժեքային հայեցակարգերի, առանց որևէ՝ թեկուզ նվազագույն, նպատակի իմաստավորման մենք որևէ բան ձեռք չենք բերում ո՛չ սոցիալական, ո՛չ հոգեբանական ոլորտներում»<sup>1</sup>: Արժեքները ձևավորվում են մարդկային գործունեության ընթացքում, այդ իսկ պատճառով, հանդիսանալով մշակութային համատեքստից դուրս անհնարին, մարդկային փորձի արդյունք, արժեքները սահմանում են մշակույթի վիճակը և միաժամանակ ազդում դրա հետագա զարգացման վրա: Բնականաբար, զբաղեցնելով ընդհանրապես մշակույթներում էական տեղ, արժեքները էական դեր են խաղում մշակույթի առանձնահատուկ արտահայտումներում, մասնավորապես քաղաքական և իրավական մշակույթներում:

Սահմանադրությունը արժեքային չափման մեջ կարելի է դիտարկել տարբեր դիրքորոշումներից: Օրինակ, կարելի է դիտարկել սահմանադրությունում առկա ձևակերպումների էսթետիկ արժեքավորությունը, սահմանադրության տեքստի բառապաշարի և քերականական կառույցների իմաստաբանական և բանասիրական, դատողությունների և այլ հիմնարարական դրույթների գաղափարական արժեքավորությունը և այլն<sup>2</sup>: Մասնավորապես ըստ Ս. Ա. Ավագյանի կարծիքի՝ սահմանադրությունը ուղղակի գաղափարախոսական՝ աշխարհընկալումային փաստաթուղթ հանդիսանալ չի կարող, ընդ որում, գրեթե դրա յուրաքանչյուր խոսքը, սահմանադրական ինստիտուտում բոլոր ամրագրումները արտահայտում են երկրի ցանկալի սոցիալ-տնտեսական համակարգի դրույթները, և յուրաքանչյուր սահմանադրություն ամրագրում է հասարակական արժեքների իր համակարգը, կողմնորոշված է նրան, որ իր հիման վրա ձևավորվեն հասարակության յուրաքանչյուր անդամի համապատասխան տեսանկյունները<sup>3</sup>: Արժեքները, որպես գիտակցության ձևեր, ուղղակի չեն նկարագրում

ինչ-որ գործողություններ կամ երևակայական երևույթներ, այլ տալիս են դրանց գնահատականը՝ դրանով իսկ դատապարտելով կամ հաստատելով վերջիններիս, պահանջում դրանց իրականացում կամ կասեցում, այսինքն՝ ըստ իրենց բնույթի հանդիսանան նորմատիվային: Այս դիրքերից է անհրաժեշտ մոտենալ նաև սահմանադրության արժեքավորությանը: Տվյալ դեպքում մենք կքննարկենք միայն սահմանադրության իրավական արժեքավորության հարցերը և միայն հակիրճ կանգ կառնենք վերջինիս քաղաքական արժեքավորության վրա: Սահմանադրության արժեքների ձևավորումը տեղի է ունենում սահմանադրության և պետության իրավական համակարգում դրա դերի վերաբերյալ վերլուծության հետ համատեղ: Դրա հետ միաժամանակ ծնվել և սկսել է զարգանալ նախնական սահմանադրականությունը՝ որպես իրավունքի համակարգի կայունության վերաբերյալ տեսանկյունների համակարգ, որում սահմանադրությունը զբաղեցնում է հատուկ տեղ, իսկ հետագայում դրան զուգահեռ՝ նաև որպես պետության նորմատիվային համակարգի կառուցման և գործառնության իրական եղանակ, որը ապահովում է սահմանադրության գերակայումը:

Պետության իրավական համակարգի վերաբերյալ պատկերացումները, որում նորմատիվային ակտերը ներկառուցված են որոշակի հիերարխիաներում, ընդ որում, գլխավորությունը պատկանում է սահմանադրությանը, ծագում և աստիճանական ձեռք են բերում կողմնակիցների մեծ թիվ XVII-XVIII դարերում ամենից առաջ մի շարք եվրոպական պետություններում և փոխադրվում Հյուսիսային ու Հարավային Ամերիկաներ (այդ երկու երկրամասերի այն տարածքներ, որտեղ այդ շրջանում գերազանց բնակվում են եվրոպացի գաղթյալները կամ առնվազն բնակչություն, ովքեր ընդունում են եվրոպական մշակութային ավանդույթները որպես սեփականներ): Ժամանակակից պայմաններում սահմանադրությունը ներկայացնում է արժեք: Երկրագնդում գրեթե պետություն չի մնացել, որում առ-

կա չէ սահմանադրություն, չնայած սահմանադրությունը, որպես այդպիսին, կարող է անվանվել տարբեր կերպ և ունենալ տարբեր կառուցվածք: Սահմանադրության ընկալումը արժեքի որակով հաստատվում է նաև այն փաստով, որ փաստաթուղթը, որը կոչվում կամ հայտարարվում է սահմանադրություն, առկա է նույնիսկ պետություններում, որոնք չեն հետևում և մի շարք դեպքերում չեն պատրաստվում հետևել հռչակված համապատասխան սահմանադրական սկզբունքներին:

XXI դարի սկզբին առանձին պետություններում (օրինակ, Սաուդյան Արաբիա, Օման) բացակայում է սահմանադրություն՝ բառիս ժամանակակից ընկալումներով, սակայն սահմանադրության համաշխարհային մասշտաբներում արժեքավորության ընդունմանը աջակցում են այդ երկրների շարժումը սահմանադրականության ուղղությամբ (նշված պետություններում նման քայլեր կարելի է համարել, օրինակ, հիմնական նիզամների ընդունումը): Սահմանադրության արժեքի համաշխարհային ընդունումը նպաստել է նաև այն երկրներում սահմանադրության ընդունմանը, որտեղ հասարակությունը պատրաստ չէ համարժեք ընկալել և կյանքում ներդնել սահմանադրականությունը:

Միևնույն ժամանակ, ժամանակակից պայմաններում ոչ միայն ընդհանրապես սահմանադրությունն է ներկայացնում արժեք, այլ ցանկացած կոնկրետ սահմանադրություն հանդիսանում է արժեք կամ առնվազն ընկալվում որպես արժեք: Եվ բոլոր դեպքերում յուրաքանչյուր սահմանադրություն ինքն է հանդես գալիս արժեքի որակով միայն այն ուժով, թե ինչ են արտահայտում կոնկրետ պայմաններում տվյալ հասարակությունում գերակայող արժեքները և ներկայացնում այդ արժեքների իրականացման իրավաբանական հենքը: Սակայն, եթե կոնկրետ սահմանադրությունում հռչակված են կանխադրություններ, որոնք չեն ընկալվում որպես արժեքներ համապատասխան երկրի բնակչության մեծամասնության կողմից, ապա նման սահմանադրությունը ևս արժեք հանդիսանալ չի կարող: Նույն կերպ նաև սահմանադրությունը, որը պարունակում է արժեքներ ներկայացնող դրույթներ, սակայն որոնք չեն իրականացվում գործնականում պետական մարմինների դիրքորոշումների և գործողությունների արդյունքում, չի կարող հանդիսանալ արժեք բնակչության համար:

Կոնկրետ սահմանադրության արժևորության հաստատման ժամանակ այն համեմատվում է որոշակի իդեալի հետ, վերջինիս որակով հանդես է գալիս ընդհանրապես սահմանադրությունը: Առկա օբյեկտների իմացության և գնահատման համար

իդեալների նշանակության վրա ուշադրություն է դարձրել Ի. Կանտը: «Չնայած չի կարելի այդ իդեալների օբյեկտիվ իրականությունը (գոյությունը), - գրում է նա, -բոլոր դեպքերում չի կարելի այդ հիմունքներով դրանք համարել խիմերաներ. դրանք գիտակցությանը տրամադրում են անհրաժեշտ չափանիշ, որն ունի նրա ընկալման կարիքը, ինչը իրականում կատարյալ է, որպեսզի վերջինիս օգնությամբ գնահատի և չափի անկատարյալի թերությունները և աստիճանները»<sup>4</sup>: Ինչպես հայտնի է, Ի. Կանտը առաջիններից մեկն է, ով ուշադրություն է դարձրել մարդու գործունեության մեջ արժեքների դերի ազատության և անհրաժեշտության հարաբերակցության քննարկման հետ կապված, սակայն առավել հիմնավոր արժեքների խնդրայնությունը վերջինիս գաղափարների հիման վրա մշակել է Ռ. Գ. Լոտցը, նեոկանտները (մասնավորապես, Վ. Վինդեյլը, Գ. Ռիկկերտը), հետագայում տարատեսակ փիլիսոփայական դպրոցների և ուղղությունների ներկայացուցիչներ: Ներկայումս տվյալ խնդրայնությունը կայուն զբաղեցրել է բազմաթիվ գիտական ոլորտների արսենալում արժանի տեղը: Եվ այսպես, կոնկրետ սահմանադրության արժեքի բացահայտման համար իրականացվում է դրա համեմատությունը Երկրագնդի քաղաքական ակտիվ բնակչության մեծամասնության կողմից արժեքի որակով ընդունվող ընդհանրապես սահմանադրության հետ՝ ըստ որոշ չափորոշիչների: Համեմատության հիշատակված պարամետրերը ընտրվում են այնպես, որ դրանցում արտացոլվեն, որպես այդպիսին, սահմանադրության հիմնական բնութագրիչները: Արժեքաբանության տարբեր ուղղությունների շրջանակներում արժեքները ավանդաբար դիտարկվել են և դիտարկվում են նորմաների (էսթետիկ, էթիկ և այլն) հետ սերտ կապում: Միևնույն ժամանակ, նշված փոխկապվածությունը այնքան մեղ է, որ XX դարի սկզբին՝ Գ. Ռիկկերտը, արժեքների նեոկանտյան տեսության քննադատությանը ի պատասխան, անհրաժեշտ համարեց որոշ աշխատանքներում ցուցանել տարբերությունները «նորան» և «արժեքներ» հասկացությունների միջև: Միևնույն ժամանակ, նորմաների և արժեքների փոխկապվածությունը ենթադրում է արժեքների որոշակի հավաքածուի առկայություն ցանկացած նորմատիվային համակարգում: Իրավունքը, որպես նորմատիվային համակարգ, բնականաբար, պարունակում է որոշակի արժեքներ (դրանց վրա է հենվում իրավական մշակույթը): Իր հերթին սահմանադրությունը, հանդես գալով իրավունքի նորմատիվային հիմքի որակով, ևս չի կարող գործել առանց իրեն բնորոշ արժեքների: Խոսք է գնում

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ոչ թե այն իրավական արժեքների վերաբերյալ, որոնք ստացել են ամրագրում սահմանադրության տեքստում և վերաբերում են իրավունքի տարբեր ոլորտներին, այլ այն արժեքների վերաբերյալ, որոնք բնորոշ են հենց սահմանադրությանը:

Սահմանադրությունը որպես արժեք բնութագրվում է իր իրավական համակարգում գերակայությամբ, իրեն ամրագրված նորմերի անմիջական գործողությամբ, մարդու իրավական կարգավիճակի ապահովմամբ, հասարակության և պետության կենսագործունեության հիմքերի հաստատմամբ, ինչն էլ ծառայում է հիմք իրավունքի բոլոր ոլորտների կառուցման, պետական մարմինների համակարգի և հանրային իշխանության իրականացման կարգի ամրագրմամբ, իր կարգադրագրերին պետական մարմինների և ամբողջ պետության գործունեության համապատասխանեցման, իրավական կարգավորման կայունացմամբ:

Այնպիսի հատկությունը, ինչպիսին է պետության իրավական համակարգում սահմանադրության գերակայությունը, վերածում է վերջինիս արժեքի Եվրոպայի և Ամերիկայի քաղաքական ակտիվ բնակչության համար սահմանադրության դարաշրջանի ամենակարգից (այդ բառի ժամանակակից ընկալումներով), ընդ որում, բացարձակման կողմնակիցների համար սահմանադրությունը, որը անխուսափելիորեն սահմանափակում է միապետի իշխանությունը, ընկալվում էր ոչ թե որպես բարիք, այլ չարիք: Պետության իրավական համակարգում սահմանադրության գերակայման ընդունումը, ինչպես ցույց է տվել գործնականը, պահանջեց նման գերակայման ապահովման մեխանիզմի ստեղծում, և ժամանակի ընթացքում ծագեցին սահմանադրական հսկողության և վերահսկման մարմիններ, ինչն էլ հանդիսացավ գերակայման հատկության օրինակաբար արդյունք: Սահմանադրության գլխավորության ապահովման մեխանիզմի անհրաժեշտությունը գիտակցվեց ոչ միանգամից (առաջին մարմինը, որին լիազորվեց նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության ստուգումը (ԱՄՆ Գերագույն դատարան), չէր հանդիսանում մարմին, որը գերադրապես մասնագիտանում էր ըստ սահմանադրական հսկողության, XIX դարում իրավական ակտերի սահմանադրականության անկախ հսկողության կիրառության օրինակները միավորական էին): Միայն XX հարյուրամյակում ծագեցին մասնագիտացված սահմանադրական դատական մարմիններ, որոնք մարմնավորում էին Գ. Կելզենի աշխատանքներում շարադրված գաղափարները, սակայն միայն XX դարի վերջում սահմանադրական հսկողության մարմինները վերած-

վեցին գործնական սահմանադրականության պարտադիր ատրիբուտի (դատականին զուգահեռ ծագեցին նաև սահմանադրական հսկողության ոչ դատական մարմիններ): Չարագսած սահմանադրականության պետություն, որում նախատեսված չէ հատուկ սահմանադրական հսկողություն, համարվում է Մեծ Բրիտանիան: Ընդ որում, XX դարի վերջին և XXI դարի սկզբին Մեծ Բրիտանիայում իրականացվում են մասշտաբային բարեփոխություններ. բացառված չէ, հնարավոր է նաև մարմնի ծագում, որը հատուկ լիազորված կլինի սահմանադրական հսկողության իրավասություններով: Անհրաժեշտ է նշել, որ Հայաստանում Սահմանադրական Դատարանը, XXI դարի սկզբներից սկսած, ներդրում ունեցավ Սահմանադրության արժեքի ամրապնդման մեջ:

Սահմանադրության արժեքի զարգացման ուղղություններից մեկը կայանում է մարդու կարգավիճակի ապահովմամբ, այլ նաև ամրագրում է պետական մարմինների համակարգը և հանրային իշխանության իրականացման կարգը, ինչպես նաև հաստատում հասարակության և պետության կենսագործունեության իրավաբանական հիմքերը, արդյունքում՝ սահմանադրությունում տեղակայված է իրավունքի բոլոր ոլորտների հիմքը:

Ամբողջ շարադրվածը չի կորցնում արդիականությունը նաև XXI դարում: Սահմանադրության կայունությունը, որը հանդիսանում է իրավական որոշակիության հայտնի սկզբունքի արտահայտումներից մեկը, չի նշանակում սահմանադրության անձեռնմխելիություն և անփոփոխություն, հատկապես որպես հիմնարարական արժեքներից մեկը դրան մոտեցումների դիրքորոշումներից: Ըստ Վ.Օ. Լուչինի նշման՝ «Սահմանադրության սոցիալական արժեքավորության գիտակցումը վերջինիս իրականացման և օրինականության ամրապնդման մեխանիզմների կատարելագործման էական խթան և ռեզերվ է»: Դրա հետ կապված սահմանադրությունը, եթե այն հասարակությունում իսկապես խաղում է արժեքային դեր, պետք է համապատասխանի փոփոխվող կենսական իրականությանը, ինչի համար վերջինումս պարբերաբար անհրաժեշտ է կատարել շտկումներ՝ պահպանելով հիմնարարական սկզբունքները: Անձեռնմխելիության ձգտումը վկայում է, որ վերջինս զբաղեցնում է արժեքների հիերարխիայում ցածր տեղ, քանի որ սահմանադրական փոփոխությունների քննարկումների սկիզբը անխուսափելիորեն արժանացնում է նաև հիմնական օրենքի այլ դրույթների նկատմամբ հասարակական ուշադրությանը՝ հանգեցնելով դրա արժանիքների և թերությունների վե-

րաբերյալ վիճարանությունների: Եվ եթե կոնկրետ սահմանադրությունը ընդունված չէ որպես իրական առաջատար արժեք, ապա դա ունակ է հանգեցնել վերջինիս անկմանը: Միևնույն ժամանակ, սահմանադրության անփոփոխությունը և, հետևաբար, կյանքի իրականության և դրա դրույթների միջև խզման ավելացումը ևս հանգեցնում է սահմանադրության արժեքազրկման: Այդ իսկ պատճառով

իմաստաբանական տեսանկյունից կարևոր է գտնել հավասարակշռությունը սահմանադրության կայունության և փոփոխության միջև:

<sup>1</sup> Տե՛ս Garcia et Enterría E. La Constitución Española de 1978 como pacto social y como norma jurídica // Boletín Mexicano de derecho comparado. Vol 123. 75. P.371-398.  
<sup>2</sup> Манхейм К. Идеология и утопия // Манхейм К. Диагноз нашего времени. М. 1994. С. 23.  
<sup>3</sup> Տե՛ս Конституционные ценности. Содержания и проблемы реализации // Материалы междунаод. науч.-теор. конфер. (Москва, 4-6 декабря, 2008г.). М., 2010. Т.1-2  
<sup>4</sup> Տե՛ս Кант И. Критика чистого разума. М., 1994. С.347.  
<sup>5</sup> Տե՛ս Лучин В.О. Конституционные нормы и правоотношения. М., 1997. С.42.

Сюзанна Назинян

Соискатель института философии, социологии и права  
Национальной Академии Наук Республики Армения

РЕЗЮМЕ

*АКСИОЛОГИЯ КОНСТИТУЦИИ*

В настоящей статье автор рассматривает конституцию с точки зрения аксиологии, раскрывает ее социальную ценность в общественной и государственной системе.

*Ключевые слова:* конституция, базовые ценности конституции, социальная, гражданская солидарность и согласие.

Syuzanna Nazinyan

Applicant of the Philosophy, Sociology and Law Institute  
of the National Academy of Sciences of the Republic of Armenia

SUMMARY

*Constitutional Axiology*

In the article the Author considers the Constitution from the point of view of axiology, reveals the Constitution in social and state system.

*Keywords:* Constitution, basic values of Constitution, social, civic solidarity and accord.